ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՀՄԱՇՁԲ-26-12/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 08.05.2026թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 27.04.2026թ. կնքված № ՀՄԱՇՁԲ-26-12/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.14 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի №1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Պատվիրատուին մատուցել Պայմանագրի № 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված № 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 419 638 800 (չորս հարյուր տասնինը միլիոն վեց հարյուր երեսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ծառայության գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենքդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետով և սույն համաձայնագրի № 2 Հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	իրավ. հասցե՝ ՀՀ ք. Երևան, Բագրատունյաց 12/73
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	գործ. հասցե՝ ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 7/1
Հ/Հ 900011144079	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02522157	Հ/Հ 220001152069000
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	ՀՎՀՀ 02249552
	Տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված N 1

№ՀՄԱԾՁԲ-26-12/1-1 գնման պայմանագրի N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

Հ/Հ	Ծառայության անվանումը	չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատուցման ժամկետը
1	Միջոցառումների հետ կապված ծառայություններ այդ թվում՝	դրամ	1	419 638 800	419 638 800	2026 թ. մայիսի 28
	2026 թ.-ի մայիսի 28-ի զորահանդեսի կազմակերպման աշխատանքներ	հատ				

Հավելված N2

№ՀՄԱԾՁԲ-26-12/1-1 գնման պայմանագրի N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2026թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 25.12.2026թ., ընդ որում՝		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	միջոցառումների հետ կապված ծառայություններ (2026 թ. մայիսի 28-ին կայանալիք զորահանդեսի կազմակերպման աշխատանքեր)	79951100/505	419 638 800	419 638 800	419 638 800

Ծանոթագրություն՝

Վճարումը կիրականացվի փուլային տարբերակով՝ պատվիրատուի և կատարողի միջև համապատասխան հանձման-ընդունման արձանագրության ակտը և փոստաթղթերը ստորագրելուց հետո:

• Առաջին փուլի վճարում՝ 25 %. կոնցեպտի վերջնականացման, անոնսների, LED կոնտենտների և անիմացիոն գլխագրերի պատրաստման, ինչպես նաև նախագծման, նախապատրաստական աշխատանքների իրականացման և տեխնիկական սարքավորումների ու տպագրական նյութերի նախնական պատվիրումների ապահովման ժամանակ:

• Երկրորդ փուլի վճարում՝ 45 %. միջոցառման տեխնիկական ենթակառուցվածքների մոնտաժի և հիմնական աշխատանքների իրականացման փուլում, մայիսի 21-ին նախատեսված առաջին փորձի համար:

• Երրորդ փուլի վճարում՝ 30 %. միջոցառման իրականացումից և ծառայությունների մատուցման պարտավորությունների ամբողջական կատարումից հետո՝ որպես վերջնական վճարում:

Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ

Տնօրեն

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ